



ՏՆՕՐԵՆ-ԽՄԲԱԳԻՐ

Ն. ՓՈՐՈՍՆԱՆ

ՊԵՏԵՐԻՍՊՈՒՆԻՍ


ՊԵՏԵՐԻՍՊՈՒՆԻՍ

Խմբու թ. ԱՐՇԱԿՈՅԱՆ լրագրի
ԳԱՂԻՔ (Հասցեագրվել)

Rédaction du journal arménien

ARCHALOUICE

HABBANIEH LE CAIRE (ÉGYPTE)



ԼՐԱԳԻՐ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՂԻՍՏՈՒ ՉԱՄԱՐ	
Տարեկան, ողջ դահլիճ. 60	
Վեցամսեայ » 35	
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան թրամբ 20	
Վեցամսեայ » 12	

ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՆԻԿ Է
ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ՄԱՍԻԿ:
Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղուած
գրութիւնք եւ չ'են տրուիր:

Գալտեան վարժարանի Հոգաբարձու-
թեան Ատենապետէն հետեւեալ նամակը
դրկուած է Արշաքոյս Տնօրէն-Խմբագրին:

Որովհետեւ նամակի մէջ եղած աղ-
նարկները մեր թերթի պարունակութեան
կը վերաբերին, նոյնութեամբ կը հրատա-
րակենք զայն, առաջիկային թողլով մեր
հրատարակաւ տալիք բացատրութիւններն
ու գիտողութիւնները:

Թիւ 64

Տ. Եղիշէ Թորոսեան
ի Գահիրէ

Տէր,

Գալտեան վարժարանի Հոգաբարձու-
թեան, նկատելով որ ձեր տնօրէնութեան
ներքե հրատարակուած Արշաքոյս լրագրի
երեք թիւերուն մէջ անպատշաճ եւ բռն
ընդուն մը գործածուած է Կ. Պոլսոյ Ս. Պատ-
րիարքի անձին զէմ. թէ այդ թիւերէն մէ-
կուն, 4,ին մէջ «Փորձաքննութեան» խորագրով
«Իրտակ» կը զձանուամբ ստորագրուած յոգ-
ուածի մը մէջ, Ս. Պատրիարքի մասին կարգ-
մը անվայել մակերկրներով համեմուած աղ-
նարկութիւններ կը մտնեն Ս. Պատրիարքի
անունը. թէ թիւ 3-ի մէջ շուրջ չորս հա-
րիւր ստորագրութիւն կրող հանրագրի մը
պատճէնը հրատարակուած կայ. թէ թիւ
7-ը «Չայն մը Աղեքսանդրիայէն» խորագրով
եւ «Իրտակ մը» ստորագրուած եւ նմանապէս
Ս. Պատրիարքի զէմ բռն յարձակումներ
պարունակող եւ քաղաքիս ժողովուրդը
զրգուելու հանգամանք ունեցող յոգուած
մը կը պարունակէ, նկատելով որ որ եւ է
հրատարակային թերթի մը տնօրէն-խմբա-
գիրը պատասխանատու է այդ հրատարա-
կութեան պարունակութեանը, եթէ իր կող-
մանէ առանձինն գիտողութեամբ մը կամ
վերապահմամբ մը չ'իրկէ զինքը այդ պա-
տասխանատուութենէն, Հոգաբարձու-
թեան համաժողովուրդէն է Ազգ. Գա-
ւառ. վարչութեան Պատ. Քաղաք. Ժո-
ղովայ տեսութեանց, որոյ համեմատ ան-
պատշաճ կը նկատուի թէ եկեղեցւոյ եւ
թէ վարժարանի մէջ ունեցած պաշտօնին
մէջ պահել անձ մը որ ազգային իշխանու-
թեան պետին զէմ յարձակումներ պարու-
նակող հրատարակութիւններ կը թողարկէ

իր Տնօրէնութեան ներքե հրատարակուած
թերթի մը մէջ, եւ խորհելով որ այդպիսի
ապօրինի ընթացքի մը մէջ գտնուող պաշ-
տօնեայ մը կարող է իր ուսուցած աշակերտ-
ներուն աւելի կամ նուազ վնասգաւոր ըզ-
գացումներ եւ կարծիքներ ներշնչել իրենց
ազգին վերաբերմամբ, կը ծանուցանէ ձեզ
թէ Գալտեան վարժարանի մէջ ձեր ունե-
ցած պաշտօնը զարգած է յառաջիկայ սեպ-
տեմբեր ամսոյ սկիզբէն:

Ատենապետ Հոգաբարձութեան (*)
Գալտեան երկուս վարժարանի
J. AZIZ

28 Օգոստոս 99
Գահիրէ

Յ. Գ.—Նկատողութեան առիթ մանա-
ւանդ որ ցարդ երեցած ութ թիւերէն ե-
րեքը գոյնօրինակ յոգուածներ կը պարու-
նակեն, յոգուածներ որ զլրտովին հակառակ
են, ձեր պաշտօնին բերմամբ, եկեղեցական
օրինաց ու կարգ ու սարքին:

J. AZIZ

ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

Ազնիւ կիրք կոչենք, թէ նախնա-
խընդրութեան արգիւնք այն յանկարծա-
կան երեւոյթները, զորք կը տեսնենք, մա-
նաւանդ վերջին օրերս, Գահիրէի հայ ե-
րիտասարդութեան վրայ, որոնք օրը օրին
նոր ու գեղեցիկ ցոլացումներով երեւան
կուգանք երկար ու անպատուաբեր տարի-
ներու բարբոսմէ մը վերջ շատ միթարա-
կան կը գտնենք շարժումի, խրտուածի, Ժո-
ղովներու, ժամագրութիւններու այդ եւ ու
զեռի կեանքը, որ բացորոշապէս կը յայ-
տարարէ թէ հայ երիտասարդութեան մէջ
կենդանութեան առողջ շունչ մ'սկսած է
քաղել ժողովրդի հարապատ զաւակներ,
զուտ ժողովրդական կոչուելու բնաւորա-
նիշներ կրող գրողներ, շահեկան ձեռնարկ-
ներու համար իրար ձեռք կ'երկնցնեն. ալ
ու ձախ ժողովրդական ալիք մ'է կը խա-

ղայ աւերել սպանալով տխուր անցեալի
մը մեռելոտ ալիքը. երիտասարդութեան
սրտին վրայ կապած ժանգն է որ կը քակի:

Անթուական ժամանակ մը սկսող Գա-
հիրէի հայ երիտասարդութիւնը կարծես
պարզապէս հիւանդ մ'էր ու մահը անվրէպ,
եթէ քանի մը սրտի մարդիկ, իբր հոգա-
ծու բժիշկ անոր թունաւոր բազկերակը չի
բռնէին ու չտային անոր փրկարար դեղ-
թափը. ժողովրդի փոքրաթիւ բայց առող-
ջանալու հակամէտ զաւակներ ոտքի են
կանգնած ու մտաւոր ապագայի մը մէջ
ամբողջապէս ոտքի կանգնեցնելու ազնիւ
եւ վստահ խօստումը կը ներշնչեն այն
տարրին, որ կը կոչուի հասարակութիւն:
Դաս մ'երիտասարդներ, բոլորովին ան-
չահասէ՞ր, ծառայելու պատրաստակամ,
ժանրակիր բեռներու հանդէպ լայն թի-
կունք կը պարզեն լայն ծրագրով մը ի
հարկին լռիկ, մնչիկ կրելու համար իրենց
սիրտի բեռը եւ ի հարկին մութ անկիւննե-
րու մէջ դարանած, ազգային ընդհանուր
չահերը անտեսող եւ անձնական դձուձ էնթ-
րիքներու գործածող ցածահոգիներու զէմ
իրենց բաշը ցնցելու:

Գործը մեծ ու վեհ է, ու ձեռնարկող-
ներու քանակը անհամեմատական. սակայն
պէտք է ոգորիլ եւ շարունակել քանի որ
սկսած է սկսելը գործը կիսելու հաւա-
սար է: Աչքի տակ ունինք ծաղկած այդ
փոքրաթիւ երիտասարդութեան բոլոր ոյ-
ժերը, մանաւանդ անոր սրտի խոր վէր-
քերն ու բարձր իրձերը. սակայն իր քայ-
լերու զօրութեան վրայ վստահ եւ նկարա-
գրի կորովին վրայ հիմնուած, մենք վստահ
ենք թէ պիտի կարողանայ առանց ջախ-
ջախուելու շարունակել իր գծած ծրագիր-
ները: Ինչ մը ոչն ենք մնացած թէն, բայց
ստոր դեղը յուսահատեցուցիչ չէ: Ուշ մը-
նալու հապճեպով ճամբայ ելլողին ամենա-
կարճ ուղին անմիջապէս ընտրելի կարճ ճամ-
բան է, եթէ այն ըլլայ նոյն իսկ անոպայ
ցից ժայռի, կամ ահաւոր դար ու փոսի
ճամբան. պէտք է վճռել, պէտք է անց-
նիլ յամառաբար: Արտաքոյ կարգի ճիգե-
րը ամեն ինչ հնարաւոր կ'ընեն: Գահիրէի
մեր երիտասարդութիւնը ճիշդ այդ ճամ-
բուն վրայ է այս օրեր: Համոզուած ըլլա-
լով թէ ժամանակին իր անպարտաճանա-
չութիւնը մտքերը ահագին շեղակոյտեր
գիլած է իր հանդէպ, ստանձնած է ծանր բե-

(*) Երկու տարիէն աւելի է վարժարանը գուրկ
է Հոգաբարձութեան անդամներէ: Ընտրութեանց
օրէնքները աչքի առջեւ ունենալով ուրիշ անդամ-
ներու գոյնօրինակ անհրաժեշտ պէտք կը տեսնենք
Ատենապետի գոյնօրինակ հաստատուելու համար
որովհետեւ մնացեալ անդամներն են որ կ'ընտրեն
Ատենապետը, եւ ոչ թէ Ատենապետը ինքզինքը
կ'ընտրէ:

աւերու տակ մտնելը Պարտաճանաչ բեռնա- կիրը երբ կը համեմատէ թէ սիրելի ու կը- բերի բեռնան որսիւթիւնը ներկայ բեռնա- կիրներու քանակութենէն անհունապէս շատ է, ալ իր կարողութիւնը բացարձակապէս կը մոռնայ ու կը մոռնէ ըստ երեւոյթի ճիշ- շող այն ահաւոր հակին տակ, որ գիտողին վրայ ջղաճգական սարսուռը կը փռէ, բայց սիրելի բեռնան տակ բեռնակրի աներեր ու հաստատուն հեգնող քայլերը, շուտով գի- տողի երեսին վրայ անոր կարողութեան յոյսը կը ծաղկեցնեն: Ինչ են բեռնակիր- ները, մինչդեռ վերցնելիք բեռ շատ կայ...

Գահիրէի փոքրաթիւ երիտասարդու- թեան վրայ երկցող իր վերքերուն գիտա- կից և անոնց բուժումը փութացնող այդ ե- բերոյթը նշանակիչ թուական մը կը համա- բերէ, բայց փոքրամասնութեան մը համար: Յանկարի է՝ որ այդ փոքրիկ խմբակը աւելի ու աւելի ծաւալ գտնէ, ժողովրդի հարազատ զաւակներ աւելի յաճախ և աւելի մեծ քա- նակով իրար գան քննելու, գառափետելու, արամաբանելու և ամենամուտ անկիւններն իսկ թափանցելու եռանդով: Այլ ու ձախ թափով փութած ոյժերը իրար ճանչնալու պա- տեհակութենէն զուրկ, իրար համար խորթա- ցած կղբայրները պէտք է յաճախ առանց հրաւերի իրենք ստեղծեն համախմբուելու շարժառիթներ ու հոն զօրաւոր կապեր հաստատեն:

Արդէն քանի մը ժամանակներու մէջ կռակէ ետե կազմակերպուած Բարեգործա- կան, Աղքատախնամ, Որբասիրայ, Հիւանդ- ներ հոգացող, Շահասիրական, Լուսարն-Բն- թեւցատուն ընկերութիւնները որոշ ա- պացոյցներ են տեղային յառաջդիմութեան Մենք այդ կարգի երիտասարդ, ժողովրդի հարազատ զաւակներէն կազմուած ընկե- րութիւններէն է ահա, որ օր մը կ'սպա- սենք տեղական ազգային ընդհանուր գոր- ծերու վարչութեան կամ անոր վերահսկու- զութեան գործը: Ազգայական հովերէ ազատ, կեղծ ազնուականութեան գարշաբուրովի գրողէն բոլորովին զերծ երիտասարդու- թիւնը միայն պիտի ըլլայ եգիպտահայ ա- պագայ գաղթականութեան մաքուր հայրը հասցնող քթը խնորհ: Յուսարի է թէ շու- տով պիտի ունենանք հաւաքովայրեր Լուս- արն-Բնթեւցարանի ձեւով, Սրճարան-խմա- տուններէ կամ բամբասանքի ու բաղա- խաղի միջնորդներէ բոլորովին տարբեր, ու- բոնցմէ շատ բան կ'սպասենք:

ԱՐՄԷՆ

ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Արտաղոյսի անցեալ շաբաթ աւուր թիւին մէջ ուշադրութիւնս գրաւեց թղթակցութիւն մը, ու- բուն շարժառիթն կը լինէր Արարկիրցիներու նա- իսաձեւութեամբ նոր կազմուած Որբասիրաց ըն- կերութիւնը: Հաճոյքով կարգացի գայն, այնու զի ուրա- խաթիթ է տեսնել՝ որ մարդասիրական ձեռնարկ- ներ արձագանգ կը գտնեն մամուլին մէջ: Եւ թե- թեւ արձամարհանքով մ'ալ ոսկայն, կը յաւելի- ըսել, որովհետեւ Պ. յօդուածագիրը գործածած էր անոր մէջ տգեղ լեզու մը, եւ այնպիսի գոեհիկ ակնարկութիւններ, որ վայրկեան մը ակամայ անձնական թաքուն նկատուիներու կ'ուզես վե- րագրել զանոնք:

Ինչ մ'աւելի չըջանալուց զատողութիւն կը պահանջուէր մէկէ մը, որ իր նմաններուն ան- իրարութեան ու զիջ ճամբան յոյս տայու հովեր կ'առնուր:

Պ. Հր-Ազ խոհուն ու հեռատես գաղափա- րական մ'ըլլալէ աւելի՝ հայրենասէր մը, շովիեմ մ'ըլլալ կ'երեւի. օրինակ ամառուք իրմէն. զըմ- բաղդարար, իր հայրենասիրական բուռն խանդին մէջ՝ կործնողցած ըլլալու է իր հայրենացի կողմ- նացոյցը:

Լոկ շիկնոտ արարածի մը շիկնոտութեան և կամ՝ մամուլորի մը պարզ տեսութեանը վրայ յենած, առանց անուան ու դեռ անտիպ կանոնա- գրին մօտէն ծանօթանալու, ողորմելի փաստով ու տրամաբանութեամբ միայն հայրենաշունչ շան- թեր կ'արձակէ Պ. Հր-Ազ «խարութիւն, ամօթ խտրողներուն» գրչելով:

Արարկիրցիներն են միայն խտրողները. ին- չո՞ւր Պ. յօդուածագիրը նոյնը չ'ըսեր Վասպուրա- կանցիներուն:

Թեթեւադիկութիւն մ'է այս, անպատեհ և մեղադրելի, որ փոխան համակրանքներ շահեցնել ջանալու այսպիսի նոր ձեռնարկի մը, իւր սաղմին մէջ ոչնչացնել կ'ուզէ:

Առանց նախաձեռնարկներէն միայն փառքն ունենալու՝ լաւատեղեակ միմիայն անոր կազմա- կերպութեան, կը յայտարարեմ թէ ընկերութեան անունն է «Որբասիրաց Ընկերութիւն Հայոց Ի Գահիրէ» նպատակ ունենալով Արարկիրի նորա- հաստատ որբանոցի որբերէն մի քանին ինստիտը իր նիւթական կարողութեան ներած չափով: Առ ամէն բարեւէր անհատ, անխաբար եւ վեկաբաց, կ'ընդունուին հոն:

Ենթադրենք պահ մը սակայն՝ թէ այս ընկե- րութիւնը միմիայն Արարկիրցիներէ բաղկացած ըլլար, այս կամ նմանօրինակ նպատակաւ մը: Մեղքը լիզո՞ւ եթէ կը սխալիմ. ասի, արդի պա- րագաներու մէջ, եթէ ընդունելի բան մը չէ՝ խըտ- րութիւն ալ չէ. ընդհակառակը, զէպի լաւն թե- լաբող օրհնելու խթան մը կրնայ համարուիլ այս ուրիշ երկրացիներուն, որ իրենք ալ բան մ'ընեն գէթ ի նպատակ իրենց բնագաւառին: Այսօր՝ ար- տասանամանի մէջ, Հայաստանի ամէն գաւառնե- րէն գաղթած երկրացիներու աւելի կամ պակաս թիւ մ'ունենք. փոխան թողլոյ որ անոնք միշտ անտարբեր մնան, լաւ չէ՞ որ բարի նախանձ մը զգան, շահագրգռուին ու գործեն, անմիջական օգ- նութիւններ հասցնելով իրենց զօրազգ կղբայր- ներուն:

Այսպէսով, հաւատացէ՛ք, մահամեծ հայրենի- քի անտանելի բերու մասամբ մը թեթեւցած պի- տի ըլլայ՝ մինչեւ որ կարելի ըլլայ հաւաքական ուժ մը գոյացնել, աւելին գործադրելու համար: Բայց հաւաքական ուժ գոյացնել այսօր, որ ամէն հայ իր անձին վէրքերը դարմանելու ետեւէ է, երբ հայրենասիրութեան ու պարտքի զգացումը խոր քուն է դեռ հայութեան արեւոտ սրտին մէջ, այս մաղթելի ուժը գոյացնել, կ'ըսեմ, այնքան զժուար է՝ որքան Բրիտանական զբառաւորներ Հայաստանի լիւններէն վեր բարձրացնելը: Ի՞նչ կ'ընենք մենք հոս յաւերժաբուն բարեգրու ստու- բորը. ինչո՞ւ ճիգ մը չենք ընել այս հաւաքական ուժը գոյացնելու, միանգամ ընդմիջա խտրութիւն բառը մէջտեղէն բառնալով: Ո՞ւր են մեր տիտ- զոսաւոր ազաները, ո՞ւր մնաց փաշաներէ, առաջ- նորդներէ, երեսփոխանականներէ, թաղականներէ հովանաւորուած երջանկալիչատակ Որբասիրամ «քօմիթէն» . . . : Վայ՛ ձեզ, Հայաստանի որբեր, մարած է անոր գոյութեան յետին պղպուղն իսկ ու անոնք ամենքն ալ, վհատած ու ձանձրացած, հագած են վերստին իրենց անամալիի յրտասար- սուռ վերարկուն: Աստուած զթխայ խեղճ որբե- րուն եւ քանի որ մենք ազաներու մեծ ձեռնար- կի այս յուսահատական fiascoն վերջ՝ չենք կա- րող մեծ բաներ սպասել համեստ դասակարգէն եւ որովհետեւ մեր տկար ուժերը գլխովին անհամա- պատասխան են որբերու քանակին, աւելի լաւ է, կարծեմ, որ ամէն մարդ իր գլխու ճարը նայի ու իր ընտանեկան վէրքերը դարմանել գիտնայ՝ իր զբոսցիներու հանդէպ, սակայն, ի պահանջի հար- կին կատարելով իր եղբայրսիրական պարտաւո- րութիւնները:

Լուսաւորեալ՝ դար, հայրենասիրութիւն,

պարտքի գիտակցութիւն, այս ամէնը լաւ՝ անա- լականին ու պղտատնականին մէջ: Կը կարծէ՞ք սակայն որ գործնականին մէջ, հայրենիք եւ ծը- ներդաւար միեւնոյն ծանրակշռութիւնը ունեցած ըլլան: Վան սով կայ, Արարկիր ջարդ տեղի ու- նեցած է. Vertudieu! մին կը տխրեցնէ, կը յու- զէ զիս, միւսը սրտիս խորերուն կ'ազդէ, ջիղերս կը ցնցէ. . . : Այդ ողորմելի զոհերը ամէնքն ալ եղբայրներս են սակայն. քոյրերս են, միեւնոյն ազգի՝ միեւնոյն ընտանիքի համարիւն զաւակնե- րը. հարկ էր որ այսպէս ըլլար. . . : ճշմարիտ հայրենասիրութիւնը այսպէս կը պահանջէր Որբա- րութիւնն է այս:

Այս է, զժբաղդարար, պերճախօս ճշմարտու- թիւնը, եւ յանցանքը պէտք է վերագրել բնու- թեան և կամ այն Աստուծոյն՝ որ հրեշտականը- ման ամբիժ արարածներ ստեղծած չէ զմեզ, ու ա- մէն բանի, ըլլայ սուրբ ու նուիրական իսկ, զա- նազանութիւն մը գրած է, որ խտրութեան ճան- քան կը տանի:

Պ. Հր-Ազ գովեստ կը կարգայ Տ. Պ Կա- րապետեանի՝ իր Վանի եւ Չէշմեհի սովահանե- րու ի նպատակ ըրած նուիրատուութեանց ամօթիւ: Մենք՝ արարկիրցիներս, ի սրտէ ուրախ ըլլալու- ք՝ որ մեր հայրենակիցներէ մին է գրաւատալան նա՝ ինչպէս ամէն հայ անհատ, ազատ է իր գործելու եւ տալու եղանակին մէջ. եւ պէտք է ընդհանր, թէ Որբասիրաց ընկերութեան մը գոյութիւնը խոչնդող մը չէ մէն մի հայրենասէ- լի զթատ ակնարկներ պտտցնելու քիչ մ'ամէն կողմ, բարեգործութեան օրհնելու հատիկները զլո- բելով ալ ու ձախ, ուրկէ հոգեվարքի հեղձամղ- ձուկ հաւաքներ կը լսուին:

Ա՛խ, եթէ . . . : Անիծեալ մեռաղ:

Ա. Օ.

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ ուրբաթ 25 Յոգոտոս Գաղաք. ժողովը նիստ ունեցաւ: Արդիւնքը հաղոր- դած ենք:

Կիրակի օր 27 օգոստ. տեղի ունեցած է Լուսարն-Բնթեւցատուն ընկերութեան Ընդհ. ժողովոյ Գ. նիստը: Անդամաց մե- ծամասնութիւնը ներկայ եղած և Օրակար- զի բոլոր խնդիրները մի առ մի նկատու- զութեան առնելով իր որոշումները սուսած է:

Տեղի ունեցած է նաև Ընդհ. Գիւանի և Գործադիր ժողովոյ ընտրութիւններն օ- ըրնաւոր քուէարկութեամբ:

Այսպիսի ձեռնարկի մը Գահիրէի մէջ ինչ աստիճան կարեւոր ըլլալը սպասումս պիտի խոստովանի:

Յաջողութիւն կը մաղթենք պատուար- ժան գործիչներուն որոնք Լուսարն-Բնթեւ- ցատուն ընկերութեան զեկը ունին այսօր իրենց ձեռքին մէջ:

Արմենիա իւր վերջին թիւերուն մէջ կը յայտնէ թէ Կիլիկիոյ օրինաւոր Կաթո- ղիկոս Տ. Գրեգորիոս եպիսկ. Ալեքսիանի ծանրապէս հիւանդ է:

ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՅԵՂԱՓՈՆԱԿԱՆ ԱՐԴԻ ԿԵԱՆՔԷ

120 երեսներէ բաղկացած այս գրքոյ- կը կը պարունակէ Պերճի (Մ. Տամատեան) հայրենասիրական ոտանաւորները:

ԳիճԵ և 5 յրուս ուլջ

Կը գտնուի խմբագրութեանս քով:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այս պահուստ բանակցութիւններ կը կատարուին Կրէտէի չորս պաշտպան տէրութեանց եւ իշխան ժորժի միջեւ, թուրքիոյ մէջ բնակող կամ ճամբորդող կրէտացիներու համար:

Թուրքիոյ սահմաններէն դուրս, արտասահման բնակող կամ ճամբորդող կրէտացիներու ազգայնութեան խնդիրն ալ բանակցութեանց առարկայ եղած է անոնց միջեւ:

Օրինակաբար և արամաբաններէն կրէտացիները թուրքիոյ ներկայացուցիչներէն կախում պիտի ունենային արտասահմանի մէջ, Կրէտէն Սուլթանին հարկատու երկիր մը ըլլալուն համար: Բայց սրովհետեւ Ք. Գուռը Կրէտէի մէջ հաստատուած իրաց արդի վիճակը չուզէր ճանչնալ, և ոչ ալ իշխան ժորժը որ չորս պետութիւններէն անուանուած է, իբրև բարձր գովաբանը Հետեաբար իշխանը խնդրած է պետութիւններէն որ կրէտացիները հպատակ ճանչնալին նորին Արքայական Բարձրութեան: Եթէ այս առաջարկութիւնը ընդունուի, այն ատեն արտասահմանի մէջ բնակող կրէտացիներու պաշտպանութիւնը պիտի յանձնուի Յունաստանի ներկայացուցիչներուն:

— Ժէնէրալ Շէռմիսը թուրք Կրէտէն վերջնականապէս, վերագաւառելու համար Անգղիա: Անգղիական զինուորներուն հրամանատարութիւնը յանձնուած է գնդապետի մը:

— Թուրք կառավարութիւնը Ռէթիմո հեռագրեց, ցանկը ունենալու համար անկէ զայլ թեւ չուզող Միւսիմաններուն, որպէս զի իրենց սեղանախոտութեան համար պէտք եղած շոգեխաները զրկուին:

— Պօլսէն կը հեռագրեն թէ չորրորդ զօրաբանակին (էրզրում) հրամանատարը խնդրած է որ կարելի եղածին չափ շուտով հրետանիներ զրկուին ռուս-թուրքական սահմանագլխին վրայ քանի մը տկար կէտեր ամրացնելու համար:

— Սուլթանը պաշտպան բարձր պաշտօնատարներով զբօսանալ մը զրկած է Անթիպատի, Սեւերան նիքիթա իշխանը իւր ընտանիքով Պօլիս առաջնորդելու համար:

Իշխանը ներկայ պիտի գտնուի Սուլթանին գահակալութեան տարեգարձին առթիւ տրուած հանդէսներուն:

— Ահմէտ ձէլալէստին փաշա 30,000 սակիով Փարիզ զրկուած է ժէժն-թուրքերը համոզելու մասնաւոր պաշտօնով: Ժէժն-թուրքերու բերանին շուրջ վազցնելու համար շինուած լուր մը կ'երևայ այս:

— Լոնտրայի թուրքիոյ գեսպան Անթուփուլօ փաշային պաշտօն տրուած է, բողոքելու համար Լոնտրայի արտաքին գործոց նախարարութեան մօտ՝ անկլօ-գաղղիական պայմանագրութեան գէմ:

— Սուլթանը մտադիր է Երլարը Գէօշկի շրջակաները գտնուած հողերու վրայ նոր պալատ մը շինել տալ որուն արժէքը պիտի ըլլայ երկու միլիոն ֆրանք:

ԹՈՔԱՆՏ

2.

ԳԱՐՄԱՆՆԸ. — 1. Ձկան իւր. Դեղարաններու մէջ թերեւս գտնուած չի, զի մը՝ որ այնքան յաճախակի գործածուած լինի որքան ձկան իւղը, և այս կարելի է վերագրել սա՛ վարդապետութեան թէ թորահիւծախոտէ յառաջ եկած անտարածութեան պատճառն է ճարպային կամ իւղային նիւթոյ պակասութիւնը:

Տր. Պէնէթ կը հատուակէ թէ իւղագործք մագործք, խոհարարք եւ այլք՝ որոց գործն առաւել կամ նուազ իւղային նիւթերու հետ է՝ նուազ ենթակայ են թորահիւծախոտի քան ուրիշներ: Տր. Քարբէնթը կը հաւատայ թէ ճարպային նիւթոյ սոխորական գործածութիւնը կ'արդելու արտին յառաջացուի՝ եւ իւր այս վարդապետութիւնը հաստատուելու համար օրինակ կը բերէ այնպիսի ժողովուրդներ՝ որոնք թէեւ արտին հակամէտ ընդունակութիւն ունենին՝ սակայն իւղային կերակուրներ շատ գործածելուն համար զերծ կը մնան անոր յարձակումէն: Տր. Սիմսըն կ'ըսէ. «Այն անձինք՝ որ բրդեայ և անոր նման գործարաններու մէջ կ'աշխատին՝ ուր մեծ քանակութեամբ կ'սպասին իւղային նիւթեր տեսաւարակ զերծ կը մնան խոյրախոտէ ու թորահիւծախոտէ»:

Տր. Հուքըր իւր տեղեկագրութիւնը կը վերջացնէ հետեւեալ եզրակացութիւնով.

«Նախ. 15—22 տարեկան եղող բոլոր անձանց մէջ հինգերորդէն աւելին չեն գործածեր ճարպային կամ իւղային կերակուրներ:

Երկրորդ. 45—50 տարեկան եղողներու 100էն 90ը կը գործածեն իւղային կերակուրներ:

Յերտրդ. ճարպային կերակուրներէն խորշող անձերէն մի քանին միայն բացառաբար խոր ծերութեան կը հասնին. մինչ մեծագոյն մասը կը մնան թորահիւծախոտէ դու 45—50 տարեկան չեղած:

Չորրորդ. 15—45 տարեկան հասակին մէջ թորահիւծախոտէ մեծագոյններուն 100էն 90ը գրեթէ երբէ՛ք չեն գործածած ճարպային կամ իւղային կերակուրներ»:

Այս տեղեկութիւններէն կրնանք ուրեմն ասպակապէս եզրակացնել թէ ձկան իւղը պէտք է գործածուի ո՛չ թէ իւր զեղ կամ գարման թորահիւծախոտի՝ այլ պարզապէս իւր մնունք:

Ձկան իւղի արտաբերութեան համար 1776ին էր՝ որ տարածուեցաւ Հիւսիսային Եւրոպայէն մինչև Մեծն Բրիտանիա, ուր կը գործածուէր այս իւղը froilif բուսակազմի եւ յողացալի գէմ, և այսպէս շարունակուեցաւ մինչև 1841, երբ Բրոք. Պէնէթ ցոյց տուաւ անոր արտաբերութեան ուրիշ յատկութիւններն ևս:

Բժշկական հեղինակութիւններէն շատեր կ'ընդունին թէ մարմնոյն սպասեալ հիւսկէններուն վերանորոգման համար չ'կայ իւղ մը, կենդանական կամ լուսական, որ կազմային գրութեան վրայ ունենայ այնքան բարեբար ազդեցութիւն որքան ձկան իւղն: Գծադրաբար, սակայն, հրապարակի վրայ գտնուած իւղերէն շատեր խորագրեալ են և ամեն ստամոքս չ'կրնար ընդունիլ այս սննդային իւղին ներկայութիւնն: Ուստի պէտք է կ'ազգէ և կը պատճառէ ստամոքսի խանգարում, հետեւաբար փոխանակ օգտակար լինելու վնասակար կ'ըլլայ: Այս իւղէն օգտուողներն առ հասարակ անոնք են՝ որ ունին փափուկ ու դեղնագոյն մորթ և որոց ստամոքսը չ'զգար ո՛ր և է անհանգստութիւն կամ պօքանք իւղին ներկայութեան: Այդպիսիք լաւ կ'ընեն զով եղանակներու մէջ իւղի գործածութիւնը շարունակել, որչափ որ կարելի է, նախապէս մէկ սուրճի դգալէն սկսելով մինչև մէկ ապուրի դգալ և քիչ մ'ալ աւելի կրնայ առնուել օրը երեք անգամ կերակուրէն անմիջապէս առաջ կամ վերջն, ինչպէս որ ստամոքսը կ'ախորժի:

2. Իրօօսօօփի աղիւր. Բրոք Չըրչիլ՝ որ առաջինն եղաւ այս գեղերը գործածողներէն և անոնց օգտակարութիւնը պաշտպանողներէն թորահիւծախոտի հիւսկէնութեանց գէմ, կը հաւատար թէ այդ գեղերն իրենց մէջ կը պարունակէին ապաքինիչ մասնաւոր յատկութիւն մը հիւսկէան արտարու գէմ, թէեւ չէր սնդիր թէ ատոնցով կարելի կը լինի յատկապէս վիճակի մէջ եղող հիւսկէաններու բուժումն: Իւր վարդապետութիւնն այն էր թէ թորահիւծախոտն յառաջ կուգայ կազմուածքին մէջ գտնուած ֆոսֆորի նուազութեան, և թէ իրօօսօօփի աղիւրը կ'ենթարկուի նոսրացման և քիչ քանակութեամբ կ'աւելուի իւղին մէջ, որպէս թէ թորահիւծախոտն արտարուած էր իւր իրօօսօօփի աղիւրով: Չըրչիլը կը շարունակէր իւր փորձերը և արտարուած էր իւր իրօօսօօփի աղիւրով թորահիւծախոտն, որ իւր իրօօսօօփի աղիւրով թորահիւծախոտն արտարուած էր իւր իրօօսօօփի աղիւրով:

տեղու գէմ, թէեւ չէր սնդիր թէ ատոնցով կարելի կը լինի յատկապէս վիճակի մէջ եղող հիւսկէաններու բուժումն: Իւր վարդապետութիւնն այն էր թէ թորահիւծախոտն յառաջ կուգայ կազմուածքին մէջ գտնուած ֆոսֆորի նուազութեան, և թէ իրօօսօօփի աղիւրը կ'ենթարկուի նոսրացման և քիչ քանակութեամբ կ'աւելուի իւղին մէջ, որպէս թէ թորահիւծախոտն արտարուած էր իւր իրօօսօօփի աղիւրով:

Տր. Հարիս կ'ըսէ. «Նկատողութեան առնուելիք առաջին խնդիրն այն է թէ իրօօսօօփի աղիւրը բացարձակապէս և քիմիապէս մաքուր են. յետոյ թէ ինչպէս պէտք է գործածել և ինչ քանակութեամբ Բրոք. Չըրչիլը կը ծանօթացուցայ այս գեղերը բժշկական աշխարհին՝ անշուշտ չէր ջատագովեր որ այս գեղերը բազաղութիւն ուրիշ գեղերու հետ. սակայն այժմ այս աղիւրը կը արդուին ոչ միայն իրարու հետ խառնուած այլ և ուրիշ շատ մը գեղերու հետ բազաղութեամբ, ինչպէս են երկաթ, սրբիմիկ, մանեղի կաւային Դեղերու այս կերպ գործածութիւնը բոլորովին արտալ է մասնաւոր կըր նկատի առնուիք այս զանազան աղերու ունեցած իրարմէ տարբեր ազդեցութիւններն . . . : Իրօօսօօփի սր սուսը պէտք է գործածել արտին առաջին ստորիւններն մէջ՝ մասնաւոր կըր ընդհանուր ջղային տկարութեան նշաններ կան: Իրօօսօօփի սր ետեւ երկրորդ եւ երրորդ ստորիւններուն համար է, և կըր կը յարմարի հիւսկէան վիճակին մեծապէս կ'օգնէ անոր առողջութեան և ուժի զարգացման . յառաջ կը բերէ հանդարտ և խոր քուն մը. կըր սակայն գեղերը կը արուին չափէն աւելի՝ այն ատեն տեղի կուտան արիւնահոտութեան: Այս գեղն թէեւ սովորաբար արտարուած կը բանայ, սակայն պէտք է գործածել խոնամութեամբ: Հասակեալ հազի, ծիւրակային տենդի, գիշերային քրտինքի եւ ջղաձգութեան մէջ մեծապէս կը նպաստէ հիւսկէան հանգստութեան, եթէ սակայն խիստ յաճախ և չափէն աւելի գործածուի, այն ատեն յառաջ կը բերէ վնասակար ազդեցութիւն մը» մարմնոյն վրայ: Տր. Ա. Ս. ՅԱԿՈՒՅԱՆ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ԳԱՀԻՐԷ, Տ. Մ. — Եթէ յիշելու և չիշելու խնդիրը գեո անորոշ կը մնայ, հոգ չէ: Այս խնդիրը «փորձաբար» մը պիտի ըլլայ, որ ինքզինքնին իբր սակի ցոյց տուողներուն խկութիւնը յայտնուի, համբերութիւնը կեանք է սիրելիս . . .

Պիտի զարմանաս այդ ոսկեծոյլ պղինձներուն վրայ: ԳԱՀԻՐԷ, Յ. Ք. — Մէկէ մը ներողութիւն խնդրելու բնաւ պակաս մը չունիմ ինչ որ մտքէս ալ անցած չէ: Երջանիկ կը համարիմ ինքզինքս որ ալ ազատեցայ ուրիշ տարի շարունակ սրտիս վրայ քարեր շարելով սերտելէ վերջ այդ կեանքը Գիտե՛ս ինչ բաներ տեսայ ու լսեցի: Համբերէ և հետզհետէ այդ ամենուն պիտի ծանօթանաս և պիտի մեղադրես զիս որ այդչափ համբերութիւն ունեցած եմ:

ԳԱՀԻՐԷ, Ն. Մ. Ա. — Անգամ մը եւս կը հարցունեմ Դեո աղիւրը զատ ալ ուրիշ բան պիտե՛ս . . . Ատոր պատրաստուած էի արդէն և իմ վրայ ազդեցութիւն չ'գործեց քու կարծածիդ չափ. բայց չեմ յուսար որ սուսնց լիլիկի այս ոսկորը մարսես . . .

ԳԱՀԻՐԷ, Գ. Չ. — Մենք խիտ լաւ գիտենք թէ այս խնդիրը ինչ գիծերէ անցած է ու պիտի անցնի, մի՛ աճապարէք:

ԳԱՀԻՐԷ, Ք. — Այո՛, կան կարգ մը գառի մորթը իրենց վրայ հազած գայլեր . . . բայց սուս քրտին չեն ծածկած . . . կ'երեւան Իր կարգին պիտի խօսինք անոնց վրայ ալ, բայց մինչև մեր խօսիլը ուշագործութիւն ըրէք որ չ'խաբուիք . . .

ԱՂԵՔՍԱՆԻՐԻՍ, Մ. Ք. — Անհուն շնորհակալութեամբ քաջալերական նամակի փոխան: Տես նուեցանք և խոստացաւ շուտով կատարել:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Ի ԳԱՀԻՐԷ

ԵՐԵՎԱՆԻ ԲԱԾՆՈՒԹԱՍ

ՍԱՆՁԵՐՈՒ, ԱԶԶԿԱՆՑ ԵՒ ՍԱՆԿԱՄԱՐՏԻԶԻ

Մանչկու դպրոցը կը գտնուի Անգղիացաց վարժարանի շէնքին մէջ ի Պապ-էլ-Մալք:

Այլ ինչու և Մանկապարտիզի համար զատ տուն մը յատկացուած է, որ կը գտնուի ի Հօշ-էլ-Շարգավի, Տավուսից:

Փորձառու ուսուցիչներու միջոցաւ պիտի աւանդուին Հայերէն, Անգղիերէն, Ֆրանսերէն և Արաբերէն լեզուները:

Մանկաւոր հոգածութեամբ ուժ պիտի արուի Անգղիերէնի:

Մանկապարտիզի համար պատրաստ է մասնագէտ և փորձառու վարժուհի մը և մանկապարտիզի վերջին մէթոններով ու գրութեամբ պիտի կրթէ մանուկները:

Վարժարաններու բացումը տեղի պիտի ունէնայ առաջիկայ Անգլոսոսեր Կին:

Մանրամասնութեանց համար զիմել, Տիար Հաճի Փիլիպպոս Եագուպիանի ի Անշիլի:

3-15

ՏԻՏԱՂՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱՍՈՅ

Հայր և Միհրանիկ:

Լեռ կը պսէին: Միհրանիկ կը տեսէ եւեւ ի խորք մը և կը հարցնէ.

— Հայրիկ, ետեմ ալ տկոպից ցաւ կ'անենա՞մ:

— Հայրկա:

— Անանկ է եւ, անոնց պակասները լեցնելու համար որչափ բամպակ պէտ է . . . :

Վերջը ի՞նչ ըրի:

— Մորքեցի ու կերայ:

— Է խղճի խայթ չունեցա՞ր. վերջին դասասանին երբ տիկին Մարիամի ու իր հաւուն սուղի գտնուի ի՞նչ պիտի րես:

— Ներեցե՛ք, Տե՛ր հայր, աղէկ գիտե՛ք որ հաւն ալ հոն պիտի ըլլայ:

— Տարակոյ չկայ:

— Այն ասեմ քս ալ տիկին Մարիամին կ'ըսեմ. «Ահա՛ հաւր»:

ՅԱՐՈՒԹՅՈՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ

ԱՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ ԱՊՏԻՆ

Տայրեկ Սանիթի ճիւղ գիմսց

Ամենաբնութի սպրանքներէ կը պատրաստ իրիտ կողիկ, հաստատուն և ճաշակաւոր կոշիկներ, արանց, կանանց և տղայոց համար:

Գիները չափաւոր և աճան:

Փորձ մը միայն կը բաւէ: 2-24

ԱՍԻԱԿԱՆ ՀԱՅԻՓՈՒԿ

Շարա Մցեհմէկ Ալի, Վերբուրիա դեղաբանի դեմ Վանասքր փողոց թիւ 25

Մ. Թորոսեան, Կ. Բարունակեան և Ընկ. կը յայտարարեն թէ, իրենց նոր բացած փուռին մէջ կը պատրաստուի անխարդախ աղիքէ ախտահան թոնրի հաց և Լաւա:

Մարտոզութիւնը անպայման կերպով զերազընող Ասիական այս պատրաստութիւնը շատ մը փափկաճաշակներու զոհունակութեան արժանացած է:

Անլիճելի կերպով միակը և անմրցելի:

ՃԱՇԱԿՆՑԷՔ ԵՒ ՏԵՍԷՔ

4-8

ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

ՎԱՃԱՌԱՑՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՒ ԱՐԱՅՈՅՆԵՐՈՒ

ՅՕՆՕԿԻՐԱԾ

ԳԱՀԻՐԷ, — Մուտքի փողոց, — Գե. Հ. Կ. Ս. և Ս. Սեւեմովի վանատեսանի գիմսց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի և բոնուսի ընտիր տեսակէ բանախելներու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԷՔ ՀՈՆ և Կիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց և կանանց ժամացոյցներ, աղամանղազարդ, ոսկի, արծաթ և ցիֆէ:

Ֆրանսական և ամերիկեան ապրանքաց ամենաբնութի տեսակներէն զարդեղներ, շքրանիք, օղիք, մասսանիներ և այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը ընի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԿՈՐ

7-50

ՏՕՐՓՕՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ապսին, Շարէ Գուպրի, թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ակուաներ:

Կը դադրեցնէ վայրկենապէս տկոպից և բերր ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուաներուն տրկունութիւնն առ նուազն և բիւռ տարուան համար կ'երաշխուորէ:

4-10

ԱՌԻԹԷՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵՑԷՔ

Օգտուն և յարմարաւոր տեղ մը լաւ կահաւորեալ սրճարան մը կայ, որոյ տէրը մեկնման պատճառաւ կ'ուզէ ծախել:

Հաստատուն գործ մը ունենալ փափաքողներն, թող գիմեն Արեալոյս խմբագրատունը, հարկ եղած մանրամասնութիւններուն տեղեկանալու համար:

1-3

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ի ԳԱՀԻՐԷ

ՇԱՐԱ ՄՕՉԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչև երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ և պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի և տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահազդեր, Հրատարակեր, Այցեխարտեր, Յանկեր, Գիրքեր, տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմսեր, Ընկերութեանց և վաճառականներու սպագրական ամեն պիտոյքներ:

Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոստանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մաքրութեան, ճշգրտագրութեան և գներու չափաւորութեան մէջ:

Եզրուտսի ո և է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք և փութով կը կատարուին:

ԳՐԻԳՈՐ ՊԵՇԻՐԵԱՆ

ԿՈՇԿԱԿԱՐ

Պապար Մուրուր Թիւ 39

Պատիւ ունի ծանուցանել թէ, իւր խանութը Շարա Միւղլիյինէն փոխադրած է ի Պապար Մուրուր: Ֆրանսական նորածեւութեանց յար և նրման կոշիկներ պատրաստելու մէջ իւր ունեցած հմտութեամբը մինչև ցարք գոհ ըրած է իրեն զիմու Պատ. յաճախորդներն:

Իւր գործածած ապրանքներու տրկունութիւնն երբէք տարակոյս չ'վերցնել:

Իրեն եղած յանձնարարութիւնք ո՛չ միայն չափաւոր գներով, այլ և փութով և մեծ խնամով կը պատրաստուին:

Դիմեցէք, եթէ կ'ուզէք ճաշակաւոր հագնիլ և կոշտերէ (նասըր) ազատ մնալ: 5-24

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐԻԷ, ՎԷՔԱԼԷԹ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (բաստըզ) սև, չազանակազոյն և ոսկեգոյն: Սև ներկ չիչով վայրկենապէս սևեցնող: Սոյն ներկերու տեսալութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադրեցնէ և մագերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղա (տազ) գլուխները մազ կը բերէ. 17 տարուան ճաղա գլուխներու վրայ փորձուած և հիանալի արդիւնք տեսնուած է: Շիշը 8 զըշող (2 ֆրանք):

Ճերմկցնող ջուր չիչով, որը մարմնոյն բնական սպիտակութիւն կուտայ առանց զգացնելու: Եզրուտսի մէջ միակը:

Ակուայի փոշի և ջուր. մին մաքուր և ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող և ամրացնող:

Թող փութան օգտուել այն անձինք՝ որոնց գլխու մագերն սկսած են տակաւ առ տակաւ թափիլ և օր մը ճաղաւ ըլլալով վաճառքին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք և կը փութանակենք բոլոր սզգայ գործածած նամակագրոյնները: 5-8